

ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ

05.10.2011



Մի րեւի՛ ուսուցիչներ

Մասնագիտական այս գեղեցիկ տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ սրտի խորքից բխող ջերմ խոսքեր ու անկեղծ բարեմաղթանքներ եմ հղում բոլորիդ:

Այս օրը հաճելի առիթ է ընձեռում երախտիքի խոսքեր ուղղել ձեզ՝ շնորհակալ և հայրենանվեր աշխատանքի համար: Այսօր բարձր է ուսուցչի դերը մեր հասարակության կյանքում և բարդ , բայց անչափ կարևոր ու պատվաբեր է ձեր առաքելությունը աշակերտ կրթելու և հասարակության արժանապատիվ անդամ ձևավորելու գործում:

Իմ անմիջական ուշադրության կենտրոնում են կրթական համակարգի խնդիրներն ու ոլորտի բարեփոխումների ընթացքը: Ընդգծելով իմ տարբերակված մոտեցումը ձեր նկատմամբ, վստահեցնում եմ, որ ազգանվեր այն գործը, որ կատարում եք ամենօրյա տքնաջան աշխատանքով, գտնում է իր արժանի գնահատականը, քանզի մեր ժողովուրդը միշտ պատվել է ուսուցչին ու խոնարհվել նրա վաստակի առաջ:

Պատվարժա՛ն մանկավարժներ, կրկին անգամ շնորհավորում եմ ձեզ տոնի կապակցությամբ ու բոլորիդ մաղթում առողջություն, նորանոր հաջողություններ պատասխանատու և կարևոր գործում, լավատեսություն ու ամենայն բարիք :

Խորին հարգանքով՝
Էդիկ Բարսեղյան
ՀՀ Արարատի մարզպետ